

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«---» 2017 թվականի N -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ  
ՆՈՅՆԵՄԲԵՐԻ 28-Ի N 1330-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է .

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի նոյեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և (կամ) միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տրամադրելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մարտի 1-ի N 297-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1330-Ն որոշման հավելվածում՝

1) «կիսամյակ» բառերը փոխարինել «ուսումնական տարի» բառերի համապատասխան հոլովածներով.

2) 6-րդ և 7-րդ կետերը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«6. Պետությունն ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցում մրցութային հիմունքով տրամադրում է պետական կառավարման լիազորված մարմնի կողմից տվյալ տարվա համար հատկացված անվճար ուսուցման տեղում՝

1) մինչև 19 տարին լրանալը հիմնական կրթության հիմքով նախնական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություն ընդունելության կարգով ընդունված ուսանողին՝ մինչև ուսումնառության ավարտը.

2) 19 և ավելի տարիք ունեցող հիմնական կրթության հիմքով նախնական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություն ընդունելության կարգով ընդունված ուսանողին՝ մինչև 19 տարին լրանալը ընդունված ուսանողների մրցութից հետո՝ թափուր տեղի առկայության դեպքում.

3) միջնակարգ կրթության հիմքով նախնական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություն ընդունելության կարգով ընդունված ուսանողին.

4) միջին մասնագիտական ուսումնական հաստատություն ընդունված և Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված հետևյալ սոցիալական խմբերին՝

ա. առանց ծնողական խնամքի մնացած կամ նրանց թվին պատկանող անձանց, որոնց վճարվում է կրթաթոշակ՝ տվյալ ուսումնական հաստատությունում սահմանված կրթաթոշակի 150 տոկոսի չափով՝ համաձայն «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,

բ. 1-ին ու 2-րդ խմբերի հաշմանդամներին և հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձանց, որոնց, հերթական քննությունները և ստուգարքները դրական գնահատականներով հանձնելու դեպքում, վճարվում է կրթաթոշակ՝ անկախ ստացվող նպաստից կամ թոշակից՝ համաձայն «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,

գ. զոհված զինծառայողի երեխա-ուսանողներին, պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամ դարձած անձանց կամ պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված (զորացրվելուց հետո երեք տարվա ընթացքում) դիմորդներից ամենաբարձր միավոր ունեցող անձանց (ուսումնական հաստատություններին Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ըստ մասնագիտությունների հատկացված տեղերում)՝ համաձայն «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի.

5) պետության համար առաջնահերթություն և կարևորություն ներկայացնող մասնագիտություններով նպատակային ուսուցմամբ ընդունված ուսանողներին.

6) Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունիսի 12-ի N 651-Ն որոշմամբ սահմանված կարգով ուսումնական հաստատություն ընդունված՝ սահմանամերձ կամ բարձր լեռնային բնակավայրերի ուսանողներին:

7. Ուսումնական հաստատությունում ուսումնական տարին սկսելուն նախորդող և հաջորդող երկու շաբաթների ընթացքում ըստ մասնագիտությունների իրականացվում է փոխատեղում: Փոխատեղման արդյունքում սույն կարգի 6-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով անվճար համակարգում ընդգրկված, սակայն նախորդ ուսումնական տարվա արդյունքներով բարձր առաջադիմություն չցուցաբերած ուսանողներն ընդգրկվում են վճարովի համակարգ, իսկ վճարովի համակարգի բարձր առաջադիմություն ունեցող ուսանողները՝ անվճար ուսուցման համակարգ: Ուսումնական հաստատության տնօրենի կողմից երեք աշխատանքային օրվա ընթացքում հրապարակվում է անվճար և վճարովի համակարգ անցած ուսանողների ցանկը և պատշաճ կերպով տեղեկացվում է ուսանողներին:».

3) լրացնել նոր՝ 7.1 և 7.2 կետեր՝ հետևյալ բովանդակությամբ.

« 7.1 Ուսանողների առաջադիմությունը որոշվում է նախորդ ուսումնական տարվա գնահատականների, այդ թվում՝ դիֆերենցիալ ստուգարքների, միջին թվաբանականի 0,01-ի ճշտությամբ:

7.2 Փոխատեղման ժամանակ առաջադիմության արդյունքների հավասար միավորների դեպքում առաջնահերթությունը տրվում է.

1) պետական կրթական չափորոշիչով հաստատված ընդհանուր մասնագիտական, հատուկ մասնագիտական առարկաներից առավել բարձր միավոր ստացած ուսանողներին.

2) նախորդ տարում անվճար համակարգում սովորող ուսանողներին.

3) քիչ բացակայություններ ունեցող ուսանողներին.

4) սոցիալապես առավել անապահով վիճակում գտնվող ուսանողներին (համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում).

5) զինվորական ծառայությունից զորացրված ուսանողներին:»:

4) 15-րդ կետում «ինչպես նաև» բառերից հետո լրացնել «ՀՀ կառավարության սահմանած կարգով ընդունված» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ կրթության և գիտության նախարար Լևոն Մկրտչյան

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի նոյեմբերի 28-ի N 1330-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման վերաբերյալ

### 1. Անհրաժեշտությունը

Որոշուման նախագծի ընդունումը պայմանավորված է ««Կրթության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» 2015 թ. ապրիլի 22-ի ՀՕ-20-Ն օրենքի պահանջով, ինչպես նաև կարգի կիրառման ընթացքում առաջացած հարցերի առնչությամբ որոշակի հստակեցումներ կատարելու անհրաժեշտությամբ:

### 2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

««Կրթության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» 2015 թ. ապրիլի 22-ի ՀՕ-20-Ն օրենքը ս/թ հունիսի 1-ից ուժի մեջ մտնելուց հետո, Հայաստանի Հանրապետությունում տասներկուամյա միջնակարգ կամ նախնական (արհեստագործական) մասնագիտական կամ միջին մասնագիտական կրթությունը պարտադիր է մինչև սովորողի 19 տարին լրանալը, եթե այդ իրավունքը չի իրացվել ավելի վաղ: Միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի նոյեմբերի 28-ի N 1330-Ն որոշմամբ հաստատված կարգով սահմանված են համապատասխանաբար դիմորդների ընդունելության արտոնությունները և ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցման տրամադրման դեպքերը:

Որոշման նախագծով առաջարկվող փոփոխությունը կկարգավորի 2017-2018 ուսումնական տարվանից սկսված մրցութային հիմունքով հիմնական կրթության հիմքով նախնական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններ մինչև 19 տարին լրանալը ընդունված ուսանողների անվճար ուսուցումը:

Որոշման նախագծով նաև առաջարկվում է կիսամյակային առաջադիմության հիման վրա իրականացվող փոխատեղումն իրականացնել ուսումնական տարվա առաջադիմությամբ, ինչպես նաև սահմանվում են առաջնահերթությունները՝ փոխատեղման իրականացման հավասար միավորների դեպքում:

Կիսամյակների ընթացքում իրականացվող փոխատեղումը գործնականում դժվար էր կազմակերպել: Միաժամանակ այն իր մեջ ներառում էր կոռուպցիոն ռիսկեր:

### **3. Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը**

Պետական բյուջեի հաշվին անվճար միջնակարգ կրթության ապահովումը Հայաստանի Հանրապետությունում միջնակարգ կամ նախնական (արհեստագործական) մասնագիտական կամ միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատություններում, ինչպես նաև կիսամյակային առաջադիմության հիման վրա իրականացվող փոխատեղումից անցումը ուսումնական տարվա և փոխատեղման առաջնահերթությունների սահմանումը:

### **4. Կարգավորման նպատակը և բնույթը**

Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած տեղերի քանակին, սույն և ընդունելության կարգերին համապատասխան՝ մրցույթի արդյունքներով նախնական մասնագիտական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատություն մինչև 19 տարին լրանալը ընդունված ուսանողների անվճար ուսուցման կազմակերպումը և փոխատեղման ընթացակարգի հստակեցումը:

### **5. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք**

Նախագծի մշակմանը այլ ինստիտուտներ և անձինք չեն մասնակցել:

### **6. Ակնկալվող արդյունքը**

Սույն որոշման ընդունման արդյունքում Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած տեղերի քանակին, սույն և ընդունելության կարգերին համապատասխան՝ մրցույթի արդյունքներով նախնական մասնագիտական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատություն մինչև 19 տարին լրանալը ընդունված ուսանողները կսովորեն անվճար: Փոխատեղումը կիրականացվի՝ հաշվի առնելով ուսումնական տարվա առաջադիմությունը:

### **7. Այլ տեղեկություններ**

Չկան:

## ՏԵՂԵԿԱԼՔ

ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի նոյեմբերի 28-ի N 1330-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ օրենքներում և իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտության բացակայության մասին

ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի նոյեմբերի 28-ի N 1330-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունումն այլ օրենքներում և իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջացնում:

## ՏԵՂԵԿԱԼՔ

ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի նոյեմբերի 28-ի N 1330-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացման կամ նվազեցման բացակայության մասին

ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի նոյեմբերի 28-ի N 1330-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունումը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի առաջացնում:

**ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**

ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ  
դիտողությունների և առաջարկությունների

Առարկության, առաջարկության հեղինակը, գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն 2017-03-17 թիվ 1.1/41/544-17 գրություն	Նախագծի վերաբերյալ առարկություններ և առաջարկություններ չունի		
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն 2017-03-22 թիվ ԱԱ/3003-17 գրություն	Նախագծի 1-ին կետի 4-րդ ենթակետում, այնպես էլ Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի նոյեմբերի 28-ի N 1330-Ն որոշման մեջ «հաշմանդամներ» և «հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձանց» բառերը իրենց համապատասխան հոլովաձևերով փոխարինել «հաշմանդամություն ունեցող անձ» և «հաշմանդամություն ունեցող երեխա» բառերով:	Ընդունված չէ:	«Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 9-րդ պարբերությունը սահմանում է. «Պետական բարձրագույն կամ միջնակարգ-մասնագիտական ուսումնական հաստատություններ ընդունված <b>1-ին և 2-րդ խմբի հաշմանդամների և հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձանց</b> ուսուցման ծախսերը կատարվում են պետական բյուջեի միջոցների հաշվին»:
ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն 2017-03-18 թիվ 1/05/379-17 գրություն	Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի 1-ին կետի 3-րդ ենթակետից հետո լրացնել նոր ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ. «16-րդ կետը լրացնել նոր՝ 5-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ. «5) մասնակցությունը քաղաքային, հանրապետական, միջազգային մրցաշարերին,	Ընդունված չէ:	Առաջարկությունը գրեթե կրկնում է որոշման 3-րդ ենթակետը՝ «մասնակցությունը միջքոլեջային, քաղաքային, հանրապետական և միջազգային մրցույթներին, օլիմպիադաներին, ուսանողական

	սպարտակիադաներին և մարզական այլ միջոցառումներին»:		գիտական նստաշրջաններին, ուսանողական շինարարական ջոկատների աշխատանքներին»: Միաժամանակ 4-րդ ենթակետով հնարավորություն է ընձեռնված ուսումնական հաստատությանը հաշվի առնել նաև ուսանողի այլ ստեղծագործական նախաձեռնություններ:
<p>ՀՀ մշակույթի նախարարություն 2017-03-23 թիվ 01/2.1/1523-17 գրություն</p>	<p>1. Նախագծի նախաբանում նշված «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերով «հղումը վերանայման կարիք ունի, քանի որ նախագծի ներկայացման համար հիմք է հանդիսացել 2015 թվականի ապրիլի 22-ի «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-20-Ն օրենքի պահանջը, բացի այդ՝ նախագծի ընդունման համար հիմք է հանդիսանում նաև «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի պահանջը:</p> <p>2. Նախագծի 1-ին կետի 1-ին ենթակետում «բառակապակցությամբ» բառը առաջարկում ենք փոխարինել «բառերով» բառով՝ հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջը:</p> <p>3. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախագծի ներկայացման համար հիմք է հանդիսացել 2015 թվականի ապրիլի 22-ի «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-20-Ն օրենքի պահանջը, որը ուժի մեջ է մտնելու 2017 թվականի հունիսի 1-ից, առաջարկում ենք նախագծի 2-րդ կետով նախատեսված ժամկետը համապատասխանեցնել հիշյալ օրենքով նախատեսված ժամկետին:</p>	<p>Ընդունված է:</p>	<p>Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխությունը:</p>
<p>ՀՀ ոստիկանություն 2017-03-23 թիվ 24/674 գրություն</p>	<p>Նախագծի վերաբերյալ առարկություններ և առաջարկություններ չունի</p>		



<p>ՀՀ ֆինանսների նախարարություն 2017-03-27 թիվ 01/83-2/5319-17 գրություն</p>	<p>Նախագծի նախաբանում «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերին կատարված հղումը, քանի որ այն չի առնչվում Նախագծի բովանդակությանը:</p>	<p>Ընդունված է:</p>	<p>Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխությունը:</p>
<p>Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք</p>	<p>Սահմանված ժամկետում հանրային քննարկման նպատակով տեղադրված որոշման նախագծի վերաբերյալ առաջարկությունները չեն ստացվել:</p>		
<p>ՀՀ արդարադատության նախարարություն 2017-05-18 թիվ 02/14/8182-17 գրություն</p>	<p>1.Նախագծի 1-ին կետի 3-րդ ենթակետում անհրաժեշտ է «կետեր» բառից հետո լրացնել «հետևյալ բովանդակությամբ.» բառերը՝ համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջների: 2.Նախագծի 2-րդ կետով սահմանված ուժի մեջ մտնելու ժամկետն անհրաժեշտ է վերանայել՝ համապատասխանեցնելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի պահանջներին:</p>	<p>Ընդունված է:</p>	<p>Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխությունը:</p>